

«ԲԱԶՄԱԶԱՅՆ ԶՐՈՅՑ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

Հրապարակելով «Ահեկան» հանդեսում (1967թ.) «Բազմաձայն գրոյց նորարարութեան մասին» նյութը, կարծում եմք, այն հետաքրքիր գրապատմական փաստ լինելով հանդերձ, որոշակի պատկերացում է տալիս 1960-ականների գրական ընթացքի, գրական շարժումների և ուղղությունների, բախումների և ժխտման, զարգացման հեռանկարների մասին: «Զրոյցի» նյութը ոչ այնքան «հնի» և «նորի», այլ ընդհանուր ընթանումների և զարգացման հեռանկարների քննության հարցն է, որ, ընկալման իմաստով, նույն տեղաշարժերն է նկարագրում թե՛ հայաստանյան, թե՛ Սփյուռքի գրական շարժումներում: Եվ որքան էլ այն բազմաձայն է և հետաքրքիր, երևան է հանում մի իրողություն՝ այն է՝ Սփյուռքի և հայաստանյան գրական ընթացքի միասնության խնդիրը, ինչպես և՛ զարգացման միտումների և ընկալումների ներքին բազմազանությունը, որը յուրահատուկ է հատկապես 1960-ականների Սփյուռքի և հայաստանյան գրական պրոցեսին, ինչպես նաև 1980-ականների գրական զարգացումներին:

Ս. Ա.

Հերթական մեր հաաքոյթներէն մէկուն ընթացքին, Հոկտեմբերի մէջ, ունեցանք բազմաձայն գրոյց մը՝ ձայնագիր մեքենայի առաջ, նորի եւ նորարարութեան մասին: Խմբագրութեան կողմէ հարցը դրաւ Պէպօ Սիմոնեան եւ գրոյցին մասնակցեցան հին ու նոր գրողներ: Ստորեւ կը ներկայացնենք այդ գրոյցը, պահելով բերանացի խօսակցութեան անմիջականութիւնը՝ լեզուական անխուսափելի անհարթութիւններով:

ԱՅԵԿԱՆ 67

ՔԱԶԱՐԵՆՑ. - Դժուար է սահման մը դնելը նորին եւ հինին միջեւ: Ինծի համար ամենակարեւորը տաղանդին ներկայութիւնն է, հանձարին եթէ կ'ուզէք: Կեանքը միշտ նոյնն է իր յափտենական զգացումներով, ատելութիւններով, սէրերով, տառապանքով, բերկրանքով: Իրաքանջիւր էակի մէջէն կ'անցնի կեանքը, եւ իրաքանջիւր էակին յա-

տուկ արտայայտութիւնն է: Հանձարը չի ծանշնար ոչ անցեալ, ոչ ներկայ, ոչ ապագայ, հանձարը բոլոր ժամանակներուն կը պատկանի: Այնպէս որ, երբ կ'ուզենք սահման դնել՝ կերպով մը արուեստակեալ ջանք մը կատարած կ'ըլլանք, ըստ իս: Մէկը որ օժտուած է ի վերուստ՝ իր խոր ալետոյթին մէջ իսկ նորութիւններ կը յայտնէ, որովհետեւ ամեն օր որ կեանքը կ'անցնի՝ ամեն օր նոր տեսիլ մը կը պարզէ իր աչքին առջեւ: Եւ եթէ տարիները կ'անցնին՝ չի նշանակեր թէ կը սպառնան այդ մարդը: Հետեւաբար չեմ գիտեր ինչ ըսել է նորը և հինը: Կարեւորը իր ըսածն է, իր ըսելիքն է: Խորքին պայծառութիւնը անհրաժեշտ է նաեւ՝ ձեռքին անթերի ըլլալը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - «Խորքի պայծառութիւնը» արտայայտութեամբ ի՞նչ կ'ուզէիք հասկնալ:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Ամեն միւթի մասին կարելի չէ ազատ համարձակ գրել, ինչպէս ներկայ հոսանքներուն մէջ կը տեսնի: Որպէսզի հեղինակ մը դասական բարձրութեան մատչի՝ պէտք է որ խորքը պայծառ ըլլայ եւ ձեւը՝ անթերի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Այդ ընդհանուր ձեւով նկատի ունենալով՝ չէ՞ք կարծեր սակայն որ ամեն ժամանակ իր ձեւը կը թելադրէ եւ պէտք է որ թելադրէ:

ՕԵԱՎԱՆ. - Ճիշդ է. գրականութիւնը կեանքի եւ աշխարհի շրջափակութեան կը հետեւի: Ամեն ժամանակ իր նոր տազնապները կը բերէ, մարդ էակին մէկ նոր սահմանումը կը բանաձեւէ: Եւ մեր վերջին 50-ամեակի ընթացքին քաղաքական դէպքերը երեւան հանեցին այն, որ սովորաբար կը կոչենք **անկաժըման**՝ գրականութեան մէջ: Այսինքն գրագէտին համար այլեւս կարեւոր է թէ մարդկութիւնը ինչ կեանք կ'ապրի: Գրագէտը չի կրնար անտեսել իր միջավայրի, շրջապատի մարդոց տառապանքները եւ հրճուանքները: Եւ ուրեմն այսօրուան գրագէտը ձեւով մը պարտադրանքի տակ կը զգայ ինքզինքը՝ արտայայտելու մարդկութեան հիմնական տազնապները եւ չսահամափակուիլ իր անձնական յոյգերուն եւ տազնապներուն մէջ:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Նորութիւնը գրականութեան մէջ՝ առհասարակ նորութեան փափաքն է մարդուն մէջ: Կենցաղային մեր առօրեային մէջ ալ նորութիւն կը փնտռենք: Եթէ մասնատրենք գրականութեան համար՝ պիտի տեսնենք որ հոն ալ մեր նորի փնտռտուքը իրականին մէջ արուեստակեալ բան մըն է: Եղածէն ծանձրացած ըլլալու եւ քիչ մը տարբեր բան փնտռելու, ընդհանուր մեր կեանքին մէջ: Ստեղծագործող արուեստագէտը, նորութեան մասին չի՞ մտածեր, որովհետեւ գրականութեան մէջ միակ նորութիւնը այն է, որ կայ ամեն մէկ մարդու մէջ: Ամեն մէկ էակ, որ կը ծնի աշխարհին մէջ, նորութիւն մըն է: Եթէ այդ էակը

կրցաւ բնութենէն իրեն շնորհուած զգալու, դատելու, աշխարհին նայելու հարազատութիւնը պահել մեծնալէն ետքն ալ՝ դարը լեցնող հանձար մը կամ, ինքնատիպ արուեստագէտ մը կ'ունենանք: Երբեմն կը պատահի: Բայց դժբախտութիւնը հոն է որ երբ կը ծնին՝ դեռ անգէտ են, եւ երբ ուսում կը սկսին առնել՝ ամխուսափելիօրէն իրենցմէ առաջ եկած մարդոց մշակոյթին ազդեցութեանը տակ կ'իյնան:

Պզտիկ մէկ **անէքղօտ** մը գուցե լաւ բացատրէ միտքս: Ասիկա վաւերական է, անձնական կեանքէս: Իմ պզտիկս, երկուքովէս տարեկան էր, օր մը ծովահայեաց պատուհանէն դուրս կը նայէր, ըսաւ. «Պապա, կարծես այսօր ծովը լուացեր են»: Եթէ այդ տողը Օշականին մօտ գտնէի՝ պիտի ըսէի որ նորութեան փնտռողով կեղծ բան մըն է ըրածը. բայց այդ պզտիկը շատ հեռու էր գրականութիւն ընելէ: Ասիկա ինծի մտածել տուաւ որ իրապէս կայ ամեն մէկ մատղաշ տաղանդին մէջ, այսպէս ըսած, կեանքին նոր ձեւով նայելու եւ նոր ձեւով արտայայտելու հակում մը, բնագոյ մը բայց դժբախտաբար տարիները կ'անցնին, կը մեծնան եւ կը սկսին այլեւս գրել այնպէս ինչպէս գրած են ուրիշները: Եթէ տաղանդաւոր մէկն է, անելի ճիշդը՝ կարծր, աշխարհին հանդէպ իր ինքնութիւնը պահող անձնատրոպիւն մըն է՝ մանկութենէն իրեն տրուած այդ դատելու, դիտելու, զգալու կերպերը չի պահեր, եւ ահաւասիկ այդ է որ մենք գրականութեան մէջ կ'որակենք ինքնատիպ, **օրիժինալ**, ինչ որ պէտք է շփոթել այն միւս **օրիժինալ**ին հետ որով ֆրանսացիները կ'որակեն քիչ մը փախուկները:

Արդ, եթէ մենք նորարարութիւն պիտի փնտռենք նորութեան համար՝ սխալ ժամբայ մըն է: Ոչ ոք մեզմէ նոր բան չի պահանջեր: Մեզմէ պահանջուածը այն է որ չձանձրացնենք ընթերցողը. բնութեան մէջ նորութիւն չկայ: Նոյնիսկ գիտութիւնը արկած եւ նորութիւն չ'ընդունիր, այլ յայտնաբերում կ'ընդունի: Կատարուած գիտերը կարելիութիւններու իրագործումներն են: Անկարելին չ'իրագործուիր, գիտ չ'ըլլար: Նորութիւնը՝ անջատ ստեղծագործութենէն, իբր ձգտում, թոյլ տուէք, նոյնիսկ հարցադրումը չ'էմ ընդունիր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Նոր ձեւով արտայայտելու փափա՞քը ինչպէս կը բացատրէք:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Ներեցէք, եթէ նոր ձեւով ըսած են, ի՞ր ձեւովը ըսել կ'ուզեմ պարզապէս:

ԾԱՅԻՆԵԱՆ. - Յոն է որ ձեզի համաձայն չեմ: Որովհետեւ հարցը շատ ընդհանուր կերպով դրիք, Պր. Քաջարեանցի պէս տաղանդի եւ ինքնատրոպեան հարց մը ըրիք: Մեր հարցը քիչ մըն ալ տարբեր է. նորութիւնը երբոր կ'ըսենք, իր ժամանակի ծայնը ըլլալ կ'ըսենք: Նոր է այն գրողը, որ գիտէ իր ժամանակի, իր դարու ոգին արտայայտել: Եթէ այսօր մենք ելլենք, օրինակ, շատ գեղեցիկ **կոթիք** ոճով եկեղեցիներ շի-

ցենք, կրնայ չափազանց գեղեցիկ ըլլալ, բայց հի՛ն կ'ըլլայ եւ մեր ժամանակին չհամապատասխանելուն համար՝ մեզմէ շատերուն հոգիին չի խօսիր: Նորը ա՛ն է, որ ժամանակի մը, սերունդի մը հոգեբանութիւնը կը բռնէ եւ կը լաւերժացնէ: Ինչ որ ժամանակին նոր էր՝ այսօր մեզի համար հին կը թուի, եւ նոյնիսկ եթէ արժէքատր է՝ վերապահութեամբ կը մօտենանք անոր: Նոյնիսկ եթէ տաղանդով եւ համձարու նուիրագործուած է՝ կ'ըսենք «գեղեցիկ է այս, բայց ի՛ր շրջանին համար լաւ է, ի՛ր շրջանին համար մեծ է»: Անշուշտ կան համձարներ, որ տեսական նոր կը մնան, եւ գիտեր ընող մարդիկ կան, որոնք իրենց գիտը այն տեսակ տեղէ մը կը բռնեն, նաեւ գրականութեան մէջ, որ ժամանակին յաղթող, տետղ ձեւ մը կու տան ատոր:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Ներեցէք: Հասկնանք՝ եթէ ձեր հարցադրումը այն իմաստով է որ նորարարութիւնը նիւթի մասին չէ, ձեւի՝ մասին է: Այստեղ, 20րդ դարու երրորդ քառորդին մէջ նստած, եթէ ես նկարագրեմ թէ Վանի մէջ հողագործը ինչպէս կը հերկէր, ասիկա բանասիրական, ազգագրական բան մը կ'ըլլայ, գրականութեան հետ կապ չ'ունենար: Ծատ բնական է, որ ես՝ այսօր ապրող մարդս այս դարը, իմ կեանքս պիտի տամ: Բայց լուսաբանեցէք թէ, լռելեայն հասկնալով որ ամենքս ալ մեր ապրած կեանքը մեր պայմաններուն մէջ պիտի արտայայտենք՝ ատոր մէջ նորարարութիւնը ի՛նչպէս պէտք է ըլլայ: Ձեր հարցադրումը խորքին մասին չէ, ձեւին մասին է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Ե՛ւ խորքի, ե՛ւ ձեւի:

ԾԱՀԻՆԵԱՆ. - Կարելի է երեակայել հին գործ մը, որուն մէջ մարդը ըսէ. «Իմ հոգիս ճատիօկայան է»: Ասիկա միայն ձեւի նորութիւն չէ, միտքի՛, նիւթի՛ նորութիւն է: Ռատիօկայանը պիտի ըլլայ որ մարդ այդ ապրումը ունենայ: Յետոյ, օրինակի համար, նոյնիսկ ձեւի մասին երբ որ կը խօսինք, վէպը, պատմութեանը, դասականացած ձեւ մը ունին: Ինչ որ դասական եւ ավանդական է՝ արդէն անունը վրան է, այսօր մեզի լիովին բաւարարութիւն չի տար: Մենք Պալգաք կը կարդանք, շատերը շատ կը սիրեն Պալգաքը, բայց եթէ այսօր Պալգաքի պէս գրենք՝ քիչ կարդացող ունենանք հաւանօրէն: Որովհետեւ այսօր որոշ գրելու ձեւ մը ունինք, որոշ ապրելու ձեւ մը ունինք: Մեր ժամանակը արագութեան, գիտութեան ժամանակն է եւ եթէ ատենին գիտութիւնը շատ պզտիկ պատուիւանէ մը կը նայէր գրականութենէն ներս, այսօր ամբողջութեամբ խրուած է գրականութեան մէջ: Այսօր, Հայաստանի մէջ նոր գրողներ ունինք, եւ ասիկա միջազգային երեսոյթ ալ է, որոնք արհեստով գրող չեն, պատրաստուած են ուրիշ բան ըլլալու՝ օրինակ ծարտարապետ: Այդ իրենց նոր պատրաստութիւնը, իրենց նոր նիւթ կու տայ: Ձեւի մասին չէ խօսքը: Նիւթն ալ նոր պիտի ըլլայ: Մեր այսօրուան մարդուն տագնապները, ամեն դարու մարդուն տագնապները չեն: Վահէն իրատեք ունի, երբ կ'ըսէ որ իրեն

համար նորութիւնը այս դարու մարդուն տազնապները ներկայացնելն է: Անշուշտ իր մտածելու ձեւն է այդ: Ուրիշ մէկուն համար ալ նորութիւնը ուրիշ բան կրնայ ըլլալ: Բայց իր ըսածը շատ անհրաժեշտ բան մըն է:

ԵԱՌՈՒԿԵԱՆ. - Պալգաքը եւ 20րդ դարու Սօրուան իրարու շարունակութիւն են: Ամանդութիւն, դասականութիւն, ասոնք, եթէ թոյլ տաք, պիտի ըսեմ որ պարագայական խօսքեր են: Պալգաք մը կամ Ֆլուպէմ մը, իրենց դարուն կիները, կամ մարդկութիւնը ընդհանրապէս ներկայացուցին: Այսօր Սօրուա մը երբեք չ'երթար Զիւս. Ափրիկէն ուսումնասիրեր, եւ վէպ մը ստեղծագործեր. չ'ուզեր, պահանջքը չունի այդ բանին:

ԵԱԶԻՆԵԱՆ. - Չի կրնար: Եւ նոյնքան հին է որքան Պալգաքը: Թերեւս անելի:

ԵԱՌՈՒԿԵԱՆ. - Իր գործը, իր ժամանակին ապրող տիպարները եւ մթնոլորտը տալով հանդերձ շարունակութիւն մըն է: Ես չեմ գիտեր, սիրով պիտի ուզէի զարգանալ այսօր, որ բացի ամեն մէկ տասնամեակին երեւան եկող նորութիւններէն, որոնք կու գան եւ կ'երթան, օրինակ ֆրանսական գրականութեան մէջ այսօր յեղաշրջական ինչ վէպ ունինք, որ թխած չըլլայ եւ շարունակութիւնը չըլլայ, իրենց գրականութեան ամենական ծամբուն: «Ամանդական» բառը, թէեւ վարկաբեկուած «նորասէր»ներու բերնին մէջ, իրականութեան մէջ կարգապահութիւնը, գրական **հիեռարշին**, եւ այսպէս ըսած՝ մարդկային զգացումներուն շարունակութիւնը ապահովող բառ մըն է:

Միեւնոյն է այսօր հայ գրականութեան մէջ: Միւս գեղարուեստներուն մէջ, հաւանօրէն նորութիւնները քիչ մը անելի զօրաւոր փաստարկութիւններ եւ մեզ դժուարութեան մատնող առարկութիւններ ընեն, բայց մնալով գրականութեան սահմաններուն մէջ՝ չկայ ապրող գործ մը, հայկական, ֆրանսական կամ որեւէ ուրիշ գրականութեան մէջ, որ քանի մը տասնամեակ բոլորելէ ետք ապրի և պատրաստուած չըլլայ իրեն ծնունդ տուող լեզուին եւ գրականութեան մարմինին վրայ՝ այս կամ այն ճիւղը կազմելով:

ՊԸԼՏԵԱՆ. - Խօսեցաք ընթերցողին գրագէտէն պահանջածներու մասին: Ես կը կարծեմ որ ընթերցողը գրագէտէն ոչ մէկ բան կրնայ պահանջել: Արդէն գրագէտն ալ ընթերցողի պահանջքին շատ չի հպատակիր: Կ'ըսուի դարուն տազնապը, ասոր անոր տազնապները: Բայց ես մէկ տազնապ կը տեսնեմ՝ անհատին տազնապը իր ժամանակի մէջ, իր ընկերային պայմաններուն մէջ: Եւ ստեղծագործութիւնը իրականութեան մէջ ես կը հասկնամ միայն անհատին միջոցովը: Ինձի համար նորութիւնը յեղափոխական է, կամ յեղաշրջում է, ըսենք: Նախ անիկա «ո՛չ» մըն է ամեն ըմբռնումի դէմ. ընկերային, բնագանցական, կրօնական: Բայց գրականութեան մէջ ան ամենէն առաջ լեզուին դէմ է, որովհետեւ մեր շուրջի աշխարհը շինուած է լեզուի եւ բառերու վրայ, եւ երբ

որ ձեր շուրջը նայիք, պիտի տեսնէք որ ամենէն առաջ բառերու մասին է որ կը խօսիք եւ ոչ թէ իրերուն: Բառերու հետ է որ գործ ունիք, եւ աշխարհը ձեզմէ շատ հեռու է: Ուրեմն ո՛չ այս ամենուն հանդէպ՝ ըսելու համար ի՛րը, ներքին իրականութիւնը: Լեզուն մեզի նախապաշարումներով, անելի ճիշդը՝ ասանդութիւններով կը հասնի: Ծատ մը բառեր չեն համապատասխաներ մեր հոգեկան վիճակներուն, մեր տագնապներուն եւ ատոր համար գրագէտը ամենէն առաջ լեզուն կը բռնէ, քանդելու համար զայն: Խորք-ծել երկութիւնը մը կը գրուի. ես կը խորհիմ որ գրականութեան մէջ խորք-ծել երկութիւն չկայ, կայ միայն գրականութիւն մը: Երբ ձեւ կ'ըսէք, բանաստեղծութիւնը կամ վէպը կոտրած էք, որովհետեւ անոր մէջ ձեր գիտակցութիւնը բաժանումներ կը կատարէ: Մինչդեռ անանկ բան չկայ. խորք մը ինքզինք կը պարտադրէ ձեռով:

Ես նորութեան մասին, գոնէ բանաստեղծութեան մէջ, կը մտածեմ որ անիկա էջք մըն է նախնական մարդը գտնելու համար. շատեր պիտի ըսեն յափտեմական մարդը, որուն չեմ հաւատար անձնապէս:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Երիտասարդ, լեզուն քանդել, նորարարութիւն ընել, այս ամենը շատ բնական զբաղումներ են, որոշ տարիքի մը մէջ: Ինչպէս Լամարթին կ'ըսէ՝ «Կայ այն երիտասարդին, որ աշխարհ կը մտնէ առանց ընդվզումի եւ դժգոհութեան, առանց քանդելու փափաքին»: Կամ մօտատրապէս. բայց իրականութեան մէջ կռուիլ բանի մը դէմ, որը քեզի սնունդ տուող, իմացական մարդը շինող կենսամիփն է, ոչ միայն անկարելի է, այլեւ անիմաստ: Ինքնատիպ կերպով արտայայտելու համար՝ լեզուն քանդելու պէտք չկայ: Իր նախորդներուն «ո՛չ» ըսելը չէ ինքնատիպ արուեստագէտի կոչումը, այլ «ե՛ս ալ կամ» ըսելն է: Ես անհամբերութիւն մը կը տեսնեմ: Որպէսզի գրողը, մեր ժամանակներուն, ուշադրութիւն գրաւէ՝ պէտք է 10-20 տարի գրէ: 90ական թուականները չեն որ օրաթերթի մը մէջ երեւցող ոտանաւորով մը «տաղանդաւոր բանաստեղծներ» դուրս գային: Հիմա գիրքեր կը գրեն տղաքը, տակաւին ուշադրութիւն չեն գրաւեր: Հիները կը յիշուին իբրեւ գրող:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Է, մեր «տերտն» ալ ատիկա չէ՛:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Հիմա, անհամբերներ կան, որոնք կ'ուզեն ուստում ընել եւ անգգուշութեամբ կը վիրաւորեն յատկապէս այն նժոյգը, որ զիրենք առաջ պիտի տանէր: Կը վիրաւորեն լեզուն, արուեստը եւ իսկապէս ուշադրութիւն կը գրաւեն. օրինակ հոս, Գրիգոր Պլլտեան, թերեւս շատ անելի տաղանդաւոր քան ուրիշներ, յաջողած է ուշադրութիւնս գրաւել. բայց ինչպէ՛ս: Պէտք է «խաղին օրէնքները» յարգուին: Լեզուին օրէնքները յարգելով մէկտեղ, եթէ կրցար ինքզինքդ պարտադրել՝ շատ լաւ: Ծահան Ծահնուր, մեր չափանիշները առնենք, ամենէն ինքնատիպ մեր արձակագիրն է, տեսա՞ծ էք որ լեզուական այլանդակութիւն մը ընէ: Վազգէն Ծուլանեանին քով, որ նոր սերունդին կուռքը դարձաւ եւ մերն

ալ էր, տեսա՞ք էք նման բան: Եւ ոչ միայն անցեալի, Չոհրապի, այսպէս ըսենք, սերունդը, այլ անոր յաջորդող, յետպատերազմեան սերունդը, անկէ վերջը Վահէ-Վահեանի եւ Մ. Իշխանին սերունդը: Այս բոլորը գէշ աղէկ հայ գրականութեան ծառայութիւն մը մատուցած են: Իսկ նորը կու գայ, ըսելու որ «պիտի քանդեմ այդ բոլորը, ես ծայրէն պիտի սկսիմ»: Ես չեմ ուզեր չար ըլլալ, բայց պիտի ըսեմ որ, դուն ո՛չ թէ հինը կը քանդես՝ այլ հինին պէս ըլլալու անկարողութիւնն է որ այդպէս տարտամ տողերու մէջ կը դրսեւորես: Պիտի խնդրէի որ մեր այս նորարարութեան հետամուտ երիտասարդութիւնը, այսպէս ըսենք՝ յառաջապահ, ռիվ կոշ, գոնէ բարեհաճէր պզտիկ սթաժ մը ընել, դասականութեան, տափակութեան եթէ կ'ուզէք, եւ անկէ վերջը մենք ալ ըսէինք որ «չէ, տղան իսկապէս ձանձրացած է»: Բայց մէկ անգամէն այսպէս, աղճատուած, կտրատուած տողեր գրել...

Արդ, ես պիտի ուզէի որ անկեղծօրէն բացատրէք ինծի, եւ համոզուելու ամբողջ բարեացականութիւնը ունիմ, թէ ինչէն մղուած էր այսպէս գրելու:

ՊԸԼՏԵԱՆ. - Ես ձեզի բացատրութիւն պիտի չտամ: Մէկ բանի հետ ձեզի բնաւ համաձայն չեմ, երբ կ'ըսէք ծառայութիւն մատուցանել հայ գրականութեան: Ծառայութիւն ոչ մէկուն կը մատուցանեն, որովհետեւ մենք անհատներ ենք, որոնք գրականութիւն կ'ընեն եւ ոչ հերոսներ: Ոչ մէկուն հանդէպ պարտականութիւն կամ պարտաւորութիւն ունինք:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Է՛, ինչո՞ւ կը գրէք, այն ժամանակ:

ՊԸԼՏԵԱՆ. - Կը գրենք մեր տազնապները գրականութեան ձեռով արտայայտելու համար:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Որո՞ւ համար. ըսիք որ բան մը չէք ուզեր ընթերցողներէ:

ՊԸԼՏԵԱՆ. - Ո՛չ, բան չենք ուզեր:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Լաւ: Ինչպէ՞ս տազնապներ հասարակութեան առջեւ կը նետէք, երբ անկէ բան չէք ուզեր: Ինչո՞ւ կը նետէք:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Չի կրնար չնետել. պահանջը մը կայ մէջը: Թերեւս քիչ մը ծայրահեղ է երբ կ'ըսէ հասարակութեան պէտք չունի, որովհետեւ ամեն մէկ գրուածք ի վերջոյ հասարակութեան մը կ'ուղղուի:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Ի՞ր պարագային՝ անելորդ է գրելը, քանի բան չ'ուզեր:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Երկու պահանջը կայ. առաջնահերթը ներքին տազնապը արտայայտելն է: Երկրորդը՝ նաեւ ուրիշի մը այդ տազնապը հասցնելը:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Մարդիկը տազնապահա՞ր պիտի ընէք: Ի վերջոյ գրականութեան բարձրագոյն կոչումը սփոփանք մը բերել է մարդուն, որովհետեւ մարդը արդէն տառապող էակ մըն է: Այդ սփոփանքը պէտք է տայ գրողը:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Բացարձակապէս ոչ: Տակաւին եթէ ըսէք որ գրականութեան կոչումը գրողին սփոփանք բերելն է՝ համաձայն կ'ըլլամ: Բայց ընթերցողի սփոփանքին համար աղօթք ըսուած բանը կայ, տէրտէր ըսուած բանը կայ: Գրականութիւնը ինչ գործ ունի հոն:

ՔԱԶԱՐԵՆՅ. - Խնդրեմ, Տէրտէրի մասին մի խօսիք: Եթէ այսօր Նաբեկացիին բանաստեղծութիւնը աղօթքի բարձրութեան հասած է՝ չէք կրնար ստուեր ածել այդ բանին վրայ:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Այո, հարցը հոն չէ. Նաբեկացին այդպէս գրեց ուրիշներուն սփոփանք տալու համար: Հիւանդներ աղէկցնելու համար, թէ՛ ոչ՝ գրեց որովհետեւ ներքին տագնապ մը ունէր: Որովհետեւ այդ տագնապը կար գործին մէջ՝ հիւանդներ ալ աղէկցան...

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Վահէ Օշական նորարարութեան մասին խորքի առնչութեամբ կ'արտայայտուէր, արդեօք ինչ կը մտածէ ձեզի մասին:

ՕՇԱԿԱՆ. - Այս խորքի ձեզի հարցը ժամանակավրէպ հարց է այլեւս: Ահաասիկ նորութիւն մը, եթէ կ'ուզէք. խորք-ձեւ երկութեան մահը: Այլեւս իրական հարցերու շուրջ երբ որ կը խօսինք՝ կարծէք երկու լեզու կը խօսինք: Պ. Ծառուկեանը կը խօսի լեզու մը, որ արդի ըմբռնումով անցած է, այսինքն այլեւս հոգի, տաղանդ, ներքին կեանք, ձեզի եւ խորքի երկութիւն, ասոնք ավելորդ բաներ են ասոնց հոգեհանգիստը լմնցած գացած է:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Մէկ բան որոշ է. Վահէն չէ փոխուած:

ՕՇԱԿԱՆ. - Քանի մը նորութիւն, որոնք հետաքրքրական են, հետեւեալներն են. մեր ներկայ ըմբռնումով՝ գրագէտին կեանքը, իր տառապանքները, իր ինչպէս գրելը, իր ինչու գրելը հետաքրքրական բաներ չեն այլեւս: Որուն հոգը՝ ինչպէս կը գրէ, ինչու կը գրէ, ինչու կը տպէ: Գործն է կարետորը: Այնպէս որ տաղանդ ունենալն ալ կարետոր չէ. տաղանդը անկախ գոյութիւն չունի, գործին մէջն է որ կը ստեղծուի: Տաղանդը առանց գործի անիմաստ է: Յետոյ, շատ շիտակ ըսաւ Պր. Պըլտեանը, լեզուական հարց մը կայ, որ կու գայ քաղաքական եւ գիտական զարգացումէն՝ վերջին հարիւրամեակի ընթացքին: Հոգեբանութիւնը եւ լեզուաբանութիւնը, զանազան գիտութիւններ, քաղաքական իրադարձութիւններ, վերջին պատերազմները, մարդկութեան մէկ երրորդին եւ մօթի ըլլալը, հիմնական տագնապներն են մարդկութեան, այսօր: Ես գրագէտը կը դնեն հիմնական հարցի մը առջեւ. թէ մարդկային հաղորդակցութիւնը կարելի՞ բան է, մարդկային հաղորդակցութեան միջոցը՝ լեզուն ինչքան կ'արտայայտէ մարդ էակը: Մարդիկ մեծ քաղաքներու մէջ իրարմէ անջատ կ'ապրին եւ հաղորդակցութեան միջոցները ձեռով մը դժուարացած են: Երբ լեզուն ալ չ'օգնէր՝ ուրեմն գրողը նախ հարց կու տայ թէ այս լեզուն, այս բարոյական յղացքները, որոնցմով կ'աշխատիմ, ճշմարտութիւն, զեղեցկութիւն ելն. ասոնք ինչ արժէք ունին, ի վերջոյ: Ճոյսէն սկսեալ մինչեւ Պէքէթ, լեզուն իբրեւ հաղորդակցութեան

կարելի միջոց քայքայուած է: Արդի ամերիկեան, անգլիական փիլիսոփայութիւնը, տասը վրայ եկած աւելցուցած է իր վերջին **անալիզները**, որոնք թէ՛ իմաստասիրութիւնը թէ՛ գրական լեզուն կը վերածեն վանկերու, յաճախ անիմաստ: Երբ գրագէտը կը գրէ, ասոնցմով ինքզինքն կ'արտայայտէ՝ այլեւս հաւանաբար մտքին մէջն ալ չունի թէ ո՞վ կը կարդայ կամ ինչո՞ւ կը կարդայ իր գրածները: Կ'ուզէ ձեռով մը այդ միջոցներով իր մարդկութեան իր ժամանակի տազնապը արտայայտել, իր նիւթը կը դառնայ մեր քաղաքական, մեր ընկերային կեանքը: Մեր կեանքի անհեթեթը, փիլիսոփայութեան, հոգեբանութեան, պատմութեան, քաղաքականութեան բերած այս ներկայ անձկութիւնը, որուն մէջ կ'ապրի գիտակից մարդկութիւնը: Ասոնք, ահաասիկ, նոր **թեմաներ** են գրականութեան մէջ, որոնք իրենց յարմար արտայայտութիւնը կը գտնեն: Այնպէս որ գրագէտը չեն կարծեր որ ըսէ թէ ինչ ձեռով պիտի արտայայտուիմ. խորքը իր ձեռը կը թելադրէ: Ինչպէս գիտակցութեան մէջ ձեռը կը թելադրէ: Ինչպէս գիտակցութեան մէջ ձեռը եւ խորքը նույնացած են, այնպէս ալ՝ գրագէտի մը երկին մէջ երկութիւն չկայ. մէկ է: Եւ այդ նորութիւնն է, ահաասիկ, որ դուք չէք ուզեր ըմբռնել եւ կը կառչիք 19րդ դարու այդ յղացքներուն, գրագէտի ներքին կեանքը, իր տաղանդը, իր հոգին, գոյութիւնը, հանրութիւնը, գեղեցկութիւնը, ճշմարտութիւնը: Այս հարցերով կը զբաղիք տակաւին, երբ որ մարդկութիւնը անցած գացած է եւ ուրիշ տազնապներով կը զբաղի:

ԲԱՋԱՐԵՆՑ. - Ըսիք որ գրականութիւնը տազնապ մը կ'արտայայտէ, չէ՞: Կը լուծէ՝ այդ տազնապը: Կամ պէ՛տք է լուծէ, թէ ոչ:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Կարելոր չէ, որովհետեւ արտայայտելով՝ այդ տազնապը ունեցողին համար կը լուծուի արդէն ժամանակատրապէս: Ո՛ր մէկ տազնապը, արուեստի կամ հոգիի կայուածին մէջ, դարերու սկիզբէն ի վեր լուծուած է: Այդ տեսակի հարցերը չեն լուծուիր: Եւ թերեւս միակ գիշումը որ կարելի ըլլայ ընել աւանդականին, եւ անոր այն ըմբռնումին որ քիչ առաջ արտայայտեցաւ հոս, այն է որ յաւերժական տազնապներու նորոգում մը կայ: Տեսական տազնապներ կան. որոնց լուծումը չէ կարելորը գրականութեան մէջ, որոնց արտայայտութիւնն է կարելորը:

ԵԱՌՈՒԿԵԱՆ. - Թիրիմացութիւնը հոն է որ, դուք կը կարծէք թէ ձեր ունեցած տազնապները ուրիշներն ալ ունին: Ուրիշներ ունին այդ տազնապները, բայց ատոնց արտայայտելու կերպը ձեր ըսած կերպը չէ: Թէեւ տափակ խօսք է ըսելը, բայց գրականութեան մէջ յալիտենական **թեմաներ** կան. սէր, ատելութիւն եւն. և Փեթրարքի օրէն ի վեր սէրը համբոյրով կը սկսի, համբոյրով կը վերջանայ...: Սփութնիքներու դարուն, տակաւին մարդիկ կեանքը ըմբռնելու մէջ անցեալը, բնութիւնը խախտող վիճակներ չեն ստեղծած. մարդկային զգացումները կը պահեն իրենց արժէքը, մարդկային կեանքի սահմանափակուածութիւնը կը դատապարտէ մարդը համեստութեան: Բայց երիտասարդական ափսոսանքները մարդը յեղաշրջական ըլլալու: Այս իրավունքը չենք կրնար ժխտել

Վահէին կամ իրեն պէս մտածողներուն: Հարցը սա է. եթէ այս կարգի նորարարներ մեզի պէս «խտամնացներ»-ուն չեն խօսիր՝ իրենց տարեկիցներուն կը խօսին: Ես պիտի ըսեմ որ ոչ: Իրականին մէջ այս մեծ բառերուն ետեւ երրորդ աշխարհ, մարդկութեան մէկ երրորդը անօթի, նոր սահմանագծումներ ելն. կը ծուարին դրսեւորուիլ փնտռող գրական ձգտումներ եւ փառասիրութիւններ: Գոնէ այս կարգի գրողներ ունենալին իրենց ընթերցողները՝ իրենց տարիքին մէջ, ինչպէս Ճոնի Յոլլիտէյ՝ իր հետետրոյնները: Սակայն վերջինինը թեթեւալիկութիւն է, մինչ տազնապներ արտայայտող գրողը ամենէն՝ ազնուական ապրումները ունի: Պէտք է գրուի այնպէս ինչպէս որ պէտք է գրուի, բայց արտայայտել այնպէս ինչպէս որ գրողը կրնայ արտայայտել:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Առէք Ինտրայի «Ներաշխարհը». ժամանակի գրողներէն եւ ոչ մեկուն պէս գրուած եւ պէտք է ըսել որ լեզուական տեսակէտով յեղափոխութիւն է:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Երբեք. լեղաշրջում մըն է: Քերականութիւնը չէ ունակոխում եւ չէ խոշտանգում:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Բայց իրեն յատուկ ձեւը կայ: Արդ, ինչո՞ւ կարելի չէ այս նորարարութիւն փնտռող երիտասարդներուն կերպերը գնահատել, քանի ազնիւ ճիգը կայ: Ինտրան իր ժամանակին համար բոլորովին նոր էր:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Նախ պէտք է կարդալ «Նոճեստան»ը, իր յողածները ժամանակակից թերթերու մէջ՝ տեսնելու համար որ Ինտրան ինք իր մէջ բարեշրջուելով հասած է հոն: Ամեն նորարարութիւն, ամեն նոր բան գեղեցիկ չէ: Գեղեցիկ է այն նորութիւնը, որ մեր ճաշակին, ոչ տափակ առումով, կու գայ: Օրինակ, կը տեսնէք ինչպէս արդի **աէրօտի-նամիք** ձեւերը կը փնտռեն, քիչ մը բոլոր առարկաներու մէջ, օրինակ այսօրուան **օթօներուն** մաքուր գիծերը բաղդատեցէք ասկէ 2 տասնամեակ առաջուան լուցկիի տուփերուն:

ԾԱՅԻՆԵԱՆ. - Հոն է հարցը: Երեակայեցէք, այսօր օթօներ անճոռնի տուփերու պէս շինուած: Վստահաբար համաձայն պիտի չըլլայիք: Գրականութեան մէջ ալ նոյնն է: Եւ պէտք չէ որ նորածնութիւնը շփոթենք: Ճոնի Յոլլիտէյ կ'ըսէք եւ իր սմանները: Այդ մարդիկը ըսելու ձեւ մը ունին, որ կարգ մը մարդերու կը հասնի: Համաձայն եմ որ թեթեւալիկութեան բաժին մը կայ, ձեր եւ մեր ճաշակով դատած, բայց ասիկա ըսել է որ ամեն նորութիւն փնտռող թեթեւալիկ է: Նորութիւն փնտռող մարդիկ կան որովհետեւ իրենց հոգին հիմով չի բաւարարուիր: Այս ժամանակի երիտասարդութեան սպասածը, պահանջածը դասական ձեւերով չ'արտայայտուիր:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Պէտք է տրամաբանական ըլլայ, գեղեցիկ ըլլայ, եւ հանճարով կամ տաղանդով կատարուած ըլլայ:

ՊԸԼՏԵԱՆ. - Մեր աշխարհը շատ ալ տրամաբանական չէ: Պր. Ծառուկեան կ'ըսէ՝ պէտք է դրոփ այսպէս կամ այնպէս որպէսզի մեր ծաշակին գայ: Բայց գրականութեան մէջ ընդունուած ծաշակը ասանդականն է, ընթերցողինը և ըսի որ ընթերցողին ծաշակը զիս չի հետաքրքրեր:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Գրողը ի՞նք պիտի ծարէ ընթերցողը: «Սահման Քաջաց գէնն իւրեանց»: Հիմա ձոհրապէն էջ մը կարդամ, անստորագիր, կը գիտնամ թէ ձոհրապն է, նոյնպէս՝ Ծահնուր: Արդեօք այս նորարարները հասա՞ն հոն, Մեսրոպին լեզուն քանդելով իսկ:

ԾԱՅԻՆԵԱՆ. - Կրնա՞ն հասնիլ: Օրինակի համար դարձեալ մոտենանք հայաստանեան ներկայ գրողներուն: Ի վերջոյ եթէ նորութիւն մը կայ՝ հոն է: Մենք կը փնտռենք ծամբաները այն նոր գրականութեան, որ մերը պէտք է ըլլայ: Հայաստանի մէջ, ահաւասիկ, մարդիկը գտած են: Կարէն Սիմոնեանը վէպ կը գրէ որ նոր է. իր ժամանակին ոգին, մարդը կու տայ: Եւ նաեւ գրելու ձեւը նոր է: Ես համաձայն եմ Վահէին, Գրիգորին, երբ կ'ըսեն որ ձեւը եւ բովանդակութիւնը իրարմէ անջատելը անիմաստ է: Ժիշտ է գրականութիւնը ամբողջութիւն մըն է, ուր խորքը իր ձեւը կը պարտադրէ. բայց խորք, ձեւ խօսքերը ըմբռնումը դիւրացնելու համար են: Ահաւասիկ Կարէն Սիմոնեան մը եւ մանաւանդ Գէորգ Արշակեան մը արտայայտութեան ձեւը գտած են իրենց ժամանակի ոգիին համապատասխան գրելու համար: Նոր են: Արշակեանը կը սկսի ժամանակէ մը, եւ յանկարծ առանց դասական բաժանումներ՝ զլուխ Բ., հատուած Գ., ընելու կ'երթայ անցեալ, ապա ետ կու գայ ներկայ: Ասիկա թերեւս ձեական մանրամասնութիւն է արտայայտութեան մէջ, բայց ընթերցողին մասնակցութիւնը պարտադիր կը դարձնէ եւ այդ շատ կարեւոր է իր գրականութեան համար: Ահա հոս նորութիւն կայ: Կարէն Սիմոնեան կը կրկնէ եւրոպական գրականութեան մէջ գործածուած մէկ թեքմիքը: Փոխանակ վէպը պատմելու մէկ հոգիի բերնով... բազմաթիւ մարդոց տեսանկիւնը կը ներկայացնէ, բազմաթիւ անձերէ կը մօտենայ պատմութեան: Այս բոլորը նորածեութիւն չեն, նորութիւն են, այն իմաստով որ մեր ժամանակի բազմերես մարդու հոգին, բազմերես կերպով արտայայտելու կը ձգտին: Եւ կը յաջողին արտայայտել:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Ասոնք թեքմիք յաջողութիւններ են: Ժիշդ է յաջող են, բայց ասոնց մէջ ի՞նչ կայ յեղաշրջական: Ընդհակառակը, նորութիւն են, որովհետեւ անցեալին վրայ բան մը կ'աւելցնեն: Մի շփոթէք յառաջդիմութիւնը նորութեան հետ:

ՕՇԱԿԱՆ. - Արշակեանի վէպին վրայ պէտք է աղէկ ծանրանալ քիչ մը: Գրած է քանի մը **ԲՂԱՆՆԵՐՈՒ** վրայ: Հոն պատմութենէն զատ, որոշ պատգամ, փիլիսոփայական փնտռտուք մը կայ, որ հերոսներուն վրայէն ուրիշ բաներ կ'ըսէ: Միւսները իրականութիւնը կը պատմեն: Բայց

գրականութեան իրականութիւնը ուրիշ է, տրամաբանութիւնը ուրիշ է, կեանքինը ուրիշ է:

ԾԱՌՌՈՒԿԵԱՆ. - Համաձայն եմ: Այս երկու անուններու կողքին, համեմատաբար նոր, կայ Մկրտիչ Սարգսեանի «Կրակի տակ» գործը: Ուրիշ անուններ ալ կարելի է տալ: Բայց ինչո՞ւ համար: Ասոնք կը պաշտպանեն մեր տեսակէտը, եւ ոչ թէ ձեր նորարարական փափաքները, որովհետեւ անոնք յաջողած են անելի լաւ եւ համակող կերպով գրել քան առաջուան արձակագիրները, եւ այս կը նշանակէ որ բարձունք մը անելի գացած են: Բայց ուրկէ՞ կու գան եթէ ոչ նախորդներէն:

ՕԵԱԿԱՆ. - Ընդունինք որ գրականութեան նոր յղացք մը, նոր սահմանում մը կայ այսօր: Գրականութիւն եւ փիլիսոփայութիւն նոյն տեղը կ'երթան հաւանաբար: Գրականութեան մէջ ներշնչում, ստեղծում յղացքները ի գօրու չեն այլեւս: Այլեւս գրականութիւնը չէ սահմանուած մեզ գրողեցնելու, մեզ դիպելու, սփոփելու, բան սորվեցնելու: Ճիշդ այն աշխատանքը, որ իմաստասէր, գիտնականը կ'ընէ, իրականութեան հասնելու՝ այդ աշխատանքով նոյն տեղը կը միտի հասնիլ. այսինքն ճշմարտութեան լուսատւումի՞ն եւ ոչ թէ առաջուան ըմբռնումով, օրինակ իրականութեան մէկ գեղեցիկ երեսը ներկայացնելու: Ահա այս նոր սահմանումն է որ չէք ուզեր ըմբռնել:

ԾԱՌՌՈՒԿԵԱՆ. - Համաշխարհային գրականութեան վրայ ակնարկ մը ցնտենք. մեծ գրողներ, որոնք իրենց ժամանակին լաւ էին, այսօր ալ լաւ են: Հոմերոս, Տանթէ, Եյթսփիր: Արդ այս բոլոր շրջաններուն մէջ յեղաշրջումներ չեղա՞ն, եւ այսօր է որ միայն կան: Հանձարներով նոփրագործուած այս գրականութիւնը լաւագոյն ուղեցոյցն է. տեսնելու նորութիւնը հերքել չէ, «ոչ» ըսել չէ: Ոչն ըմբոստութիւն մըն է, բռնութեան մը դէմ: Գրականութիւն բռնութիւն էր, հոսում չէ: Որո՞ւն ոչ պիտի ըսենք:

ՕԵԱԿԱՆ. - Աւանդականին:

ԾԱՌՌՈՒԿԵԱՆ. - Աւանդականին, ժխտական իմաստով որ կու տաս, «ոչ» ըսելու պէտք չկայ, ան ինքզինքը մեռցուցած է արդէն: Բայց ապրող գրականութեան ինչո՞ւ «ոչ» ըսենք:

ԵԱՀԻՆԵԱՆ. - Հարց մը կայ: Երեւակայեցէք որ մէկը ելլէ, Հոմերոսի, Եյթսփիրի պէս գրէ: Դո՞ւք այդ գործը այսօր կը համի՞ք: Այսօրուան Եյթսփիրը ուրիշ տեսակ կ'ըլլայ, ապագայ դարերուն համար Եյթսփիր պիտի ըլլայ: Եյթսփիրը մեզի համար յարգելի եւ սիրելի է այն չափով միայն որ կրցած է մարդու մէջէն յաւերժականը եւ առհաւականը բռնել: Եւ այդ պարագային բաւական մը մօտեցած կ'ըլլանք իրարու եւ պարզապէս պատի մը երկու կողմերէն իրարու կը խօսինք:

ԾԱՌՌՈՒԿԵԱՆ. - Բաւական թանձր պատ մըն է...

ԵԱՀԻՆԵԱՆ. - Չեմ կարծեր. միայն պատին երկու կողմէն իրարու հետ խօսողներուն գլուխները թանձր չըլլան:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Պատին այս կողմի գլուխները կրնան թանձր ըլլալ, բայց միւս կողմիներուն գլուխները անելի մօտ ըլլալուն, եւ անելի աշխոյժ սրունքներ ունենալուն՝ պէտք է պատին այս կողմը ցատկեն, որովհետեւ դիրքին է իրենց համար:

ԾԱՌԻՆԵԱՆ. - Ճիշտ հոն է որ «ո՛չ»ը կայ: Կ'անդրադառնանք որ ամեն շրջանի գրականութիւն եւ արուեստ հակադրութիւն մըն է իր նախորդ շրջանին:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Բացարձակապէս ճիշդ:

ԾԱՌԻՆԵԱՆ. - Վաղուանը պիտի չըլլար՝ եթէ մենք չըմբօստանայինք երէկուանին դէմ, որ քիչ մը երկար յաւերժացած է: Այս է պարզապէս հարցը: Եւ ամեն շրջան իր նորութիւնը ունի: Այսօրուանը կը կայանայ, այսօրուան մարդը իր բազմերես հոգիով, իր ամբողջութեամբ ներկայացնելուն մէջ, կամ ներկայացնել ձգտելուն մէջ: Օրինակ այսօր եթէ Կ. Սիմոնեանը ելլէր եւ Երեսանի կեանքը ներկայացնէր այս միեւնոյն տափակ ձեւով որ դժբախտաբար շատ մը հայաստանցի գրողներունն է, ոչ իր հերոսը կը սիրէին, ոչ ալ՝ իր հայը: Առաջ մեզի կը ներկայացնէին բաներ, եւ դժբախտաբար Սփիւռքի մէջ նման գրողներ, գրողի յաւակնութիւն ունեցողներ կան, որոնք անցեալէն յիշատակ են եւ լաւագոյն պարագային գեղօրի մը ձեւով կրնան ներկայանալ, որ աղուոր, յարգանքի արժանի տեղ մը կրնանք դնել, բայց մեր հոգիին մէջ ոչ մէկ լար մը թրթռացնէ: Կամ շատ երկրորդական լար մը: Պէտք է ներկայացնել բաներ այսօրուան կեանքէն, ճիշդ է, կը զիջիմ, հիմնական ժշմարտութիւն մն է, որոնք յափտեմական ըլլան, բայց ատոր հետ մէկտեղ, այսօրուան կեանքի պայմաններուն համապատասխան ըլլան:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Բայց Վահէն, իր հետետորդներով, որովհետեւ հետետորդներ ալ ունի, ձեր ալ ընկերակցութեամբ, ժակատ մըն է. ժակատի մը դէմ կռիւ կ'երթաք, որ գոյութիւն չունի: Ձեզի դէմ պայքարող չկայ: Ձեր տազնապը ձեր մէջն է: Չկարենալ իրագործուելու, եւ իրագործուելու համար գլուխը պատէ պատ զարնողի, պայքարի մէջ եղողի վիճակ մը:

ՕՇԱԿԱՆ. - Չէ՞ք կարծեր որ ատիկա կրնայ արդի մարդուն մէկ տագնապը ըլլալ, ահաասիկ:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - «Արդի մարդ» շատ կ'ըսուի: Հիւլեական դար կ'ըսենք, սփութնիք: Այնուամենայնիւ կեանքը կ'երթայ իր աւանդական ժամբով, առօրեայ մտահոգութիւններով: Ձեր ըրածը դժբախտաբար այնքան մեծ ուստում մըն է որ մենք, մեր գրականութեան եւ մեր հանդէպ դժգոհութիւններ ունենալով հանդերձ, մերինը մոռցնելու եւ նորին փարելու աստիճան ջերմութիւն, գրաւութիւն եւ տաղանդ չենք տեսներ: Ատոր պատճառը տաղանդի պակասը չէ, այլ դէպի սխալ ըմբռնուած նորարարութեան մը ձգտումը, կիրք մը լեզուին դէմ, եւն: Տափակ ըլլալու սարսափը ամենէն մեծ տափակութիւնն է: Եւ ես պիտի ուզէի որ այս լեզուական

նորարարություններէն հրաժարիք: Բնական ըլլանք: Բնականը տափակութեան հոմանիշ չէ: Մենք շատ բաներու վարժուած ենք: Երբ որ եղիշէ Չարենցը կ'ըսէ

«Եկել երկաթէ երգ եմ ձեզ ասում
Ես կարմիր պոէտ եղիշէ Չարենց»

մենք վարժուած ենք երկաթ բառը երգի ածական ալ գործածել. բայց ըսած է տեղին, ժամանակին, եւ այդ խելագարած ամբոխներու, յեղափոխութեան մէջ, երգը երկաթը կը վերցնէ: Այնպէս որ դուք ձեր ինքնատպութիւնը երեւան հանելու բաւական լայն ասպարէզ ունիք, յարգելով հանդերձ ընդունուած քերականական օրէնքները:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Քերականութիւնը, լեզուն բաներ են որ ընդհանրական են: Բայց այդ լեզուն գործածելու ձեւին մէջը տարբերութիւններ կան եւ խօսքը ատոր մասին է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. - Կեդրոնական միւթը արդեն սպառեց յարակից հարցերն ալ: Բայց որպէսզի անելի շօշափելի եզրականութիւններու յանգինք՝ այդ հարցերէն մէկը նորէն պիտի դնենք: Ուրեմն, վերջին շրջանին առհասարակ հայ գրականութեան մէջ ո՞ր գրողներու մօտ նորութիւն կը գտնէք, Սփիւռք եւ Հայաստան:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Եթէ սկսիմք Ա. համաշխ. պատերազմէն ինծի համար նորութիւն է Շահան Շահնուրը. իսկ մեզի անելի մօտ՝ օրինակ Պարոյր Սեակը:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Համաձայն եմ: Պ. Սեակը կրնայ արուեստի որոշ կալուածներու մէջ վիրաւոր ըլլալ, բայց որպէս յղացք, առնականութիւն, արտայայտելու կիրք եւ ուժ՝ անուրանալի կերպով նոր է:

Եւ դժբախտութիւնը ան է որ հիմա Սփիւռքի մեջ ոչ Պարոյր Սեակ ունիք, ոչ ունենալու անմիջական յոյսեր: Թերեւս միակ անմիջական նորութիւնը, որ կայ մեր սփիւռքահայ գրականութեան մէջ, պոլսահայ գրականութեան մէկ նոր թեւն է. հակառակ կարգ մը թերութիւններու, Հահրատը, Խրախունին անպայման որ նորութիւն կը բերեն իրենց արտայայտուելու կերպով:

ՕԵԱԿԱՆ. - Հահրատը՝ այո, Խրախունին՝ չեմ կարծեր:

ՔԱԶԱՐԵՆՑ. - Եթէ Խրախունին սեղմենք՝ ի՞նչ կը մնայ. մեծ բան մը կ'ըսէ՞, մեծ նորութիւն մը կը յայտնէ՞:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Մեծ բան մը, յեղաշրջող, դարերուն գացող ձեւով թերեւս չ'ըսեր: Բայց մեր ալ ցաւը հո՞ն է ահաւասիկ, որ ստիպուած ենք այդ տեսակի նորութիւններով ալ մխիթարուելու: Իսկ Հահրատը, խառնուածք ունեցող մարդ մըն է, որ իր ժամանակին մէջ կ'ապրի եւ իր ժամանակի զգայութիւնները կ'արտայայտէ: Ճիշդ է, անհաասար է, բայց նորութիւն մը կայ իր արտայայտութեան մէջը եւ նաեւ այն հոգեկան տագնապին մէջը, որ կ'աշխատի ազատ բանաստեղծութեան ձեւով տալ: Մեր գաղու-

թին մէջ, առանց հաշուելու Վահէն, որուն բոլոր գրածներուն ցաւ ի սիրտ համաձայն չեմ, կը կարծեմ որ արդէն իսկ ծանօթ դարձած անուն չկայ:

ՕՇԱԿԱՆ. - Զահրատի մէջ ժիշդ է նոր զգայնութիւն կայ. դժբախտաբար իր զգայականութիւնը սահմանափակ է: Բայց գտած է եղանակ մը, իր ըսելիքին յարմար ձեւը: Նորութիւն է մեր գրականութեան մէջ, երբ Զահրատի պէս անձ մը բանաստեղծութեան կաղապարը կը գործած է հասնելու համար գաղափարներու: Անոնցմէ եկած զգայնութիւնները, որոնք շատ խաբուսիկ են, դժուար բռնուելիք, արտահայտելու համար՝ հին կաղապարները չեն բաւեր, շատ կարծր են: Պէտք է որ ատոնք փշրէ, ինչպէս որ ըրած է, եւ իր ըսելիքի յարմար արտայայտուելու եղանակ գտնէ եւ գտած է: Դժբախտաբար գործին մէջ կը պակսի արուեստի զգայարանը մը, որ նոյնպէս կը պակսի Պարոյր Սեւակի մօտ: Արձակի շատ կը մօտենայ, եւ կը մոռնայ որ եթէ մնայուն օրէնքներ կան բանաստեղծութեան մէջ՝ բանաստեղծութիւնը, որքան կը հասկնամ, բառերու աշխարհ է:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Ուրիշին աչքերուն շիւղը տես, ոչ՝ աչքերուդ գերանը, չէ՞:

ԾԱՅԻՆԵԱՆ. - Զարմանալի է որ Զահրատն ալ, ոչ նոյն բառերով, բայց գրեթէ միեւնոյն բանը Վ. Օշականի մասին կ'ըսէ:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Սեւակի պարագային՝ շատ աղուոր բան մը ըսաւ, որ ժիշդ է, բայց այդ թերութիւնը անոր մօտ հարկուէն իննըսուն հինգ է:

ՕՇԱԿԱՆ. - Մտիկ ըրէ: Բանաստեղծին դրամագլուխը բառերն են, եւ տեղ մը Սարթըր կ'ըսէ որ բանաստեղծին եւ արձակագրին մէջ հասարակաց միակ գիծը գրելու ափքն է: Միւս ամեն ինչերը տարբեր են, եւ այս բառերու ապրումը, որ խօսքին մէջ բանաստեղծին միակ ապրումն է, ինքը բառերով շրջապատուած է. բառերու պրիսմակէն աշխարհը իրեն կու գայ: Ուրիշ բան չունի իբրեւ նիւթ, ոչ մարդկային յուզումները կան, ոչ ալ, ըսենք, իրականութիւնը կայ, այլ բառերով՝ իրականութիւն մը կայ: Այս հիմնական բնոյթը բանաստեղծութեան մասամբ անտեսուած է: Ես կը խորհիմ որ երբ բանաստեղծը բառերու հետ կը խաղայ, օրինակ տեղերը կը փոխէ, ատիկա ժամանցի համար չ'ըներ բառերու տեղափոխումներով. նոր բախումներու առիթ տալով՝ դասական ըմբռնումէն կ'անջատուի: Եւ ունենալով արդէն իրեն հետ մտերմութիւն մը որ ուրիշին հետ չեն ունեցած, այդ բառերը, որ մանկութենէն, պատանեկութենէն կու գան՝ նոր կառուցով միակ ձեւն են, որով բռնէ այն նոր զգայնութիւնները, որոնք ինք կ'ունենայ կեանքի հանդէպ: Եւ հոն է դժուարութիւնը որ հաղորդական չէ. կը խօսի շատ շատ բանաստեղծներուն, եթէ խօսի: Բայց իրեն համար, իր գոյութեան պատճառաբանութիւնը, եթէ կ'ուզէք, բառերն են. իր դրամագլուխը, գործիքը: Եւ ատոնք զանազան ձեւերու տակ դնելով, քերականութեամբ խաղալով՝ արտայայտել իր կեանքին անձկութիւնը, տագնապները: Դժբախտաբար հոն է որ յաճախ քերա-

կանութիւնը կը տուժէ, սենթաքսը կը տուժէ, իմաստը կը տուժէ: Բայց բանաստեղծին համար այդ կարեւոր չէ, խնդիրը ինքզինքն լաւագոյն կերպով արտայայտելն է: Չեն հաւնուիր, չեն հասկցուիր՝ որո՞ւ հոգը:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Բանաստեղծին համար էականը այն է որ, անկախ իր գործերէն երբ իր անունը կու տանք՝ իր մթնոլորտը մեզ համակէ: Առէք օրինակ Սեծարեւցը կամ Վարուժանը են.: Արդ, այս տեսանկիւնէն դիտած, արտասահմանի նոր բանաստեղծներուն մէջ նման ինքնուրոյն մթնոլորտ ստեղծող չունինք: Նոյնիսկ մեր յետպատերազմեան սերունդէն, օրինակ Մ. Իշխան, Վահէ-Վահեան, Ն. Սարաֆեան, լաւ ծանօթներուն կու տան նման մթնոլորտ մը բայց, նորերը՝ ոչ: Ինչո՞ւ:

ՕՇԱԿԱՆ. - Միւսները անելի հաղորդական են:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Որովհետեւ անոնք քանդակագործ են, իսկ ասոնք ոսկերիչներ. իւրաքանչիւր տող բանուած է, բանաստեղծութեան վրայ գուցէ հսկայ աշխատանք մը կայ, բայց քանդակագործը 2-3 հարուածով միւթը արդէն քարէն դուրս կը պոռթկացնէ: Բանաստեղծը պէտք է կարենայ իր գրականութեան մէջ մեզի իր պատկերը տալ, իր հոգին: Իր անհատականութիւնը պարտադրէ՝ գործը պարտադրելէ առաջ: Նորերուն քով այս բանը չկայ: Ծատ կ'աշխատին: Հակառակ որ կ'ըսեն ժողովրդին կարեւորութիւն չեն տար, շատ մտահոգ են հաւնութիւն չհաւնութիւն հարցով:

ՕՇԱԿԱՆ. - Պարզ հարցում մը: Դուք պիտի կրնա՞ք այնքան առարկայական ըլլալ ձեր դատումներուն մէջ, այնքան արդիական, որ արտօնէք բանաստեղծի մը, բառերու ուղղագրութիւնը փոխել, լսնուն իր ըսելիքին: Օրինակ. թակարդ բառը, ինծի համար 2 թ-ով պէտք է գրուի: Բառը սխալ չիմուած է, որովհետեւ թ-ն ինքն իր մէջ դարձուած անելի թակարդի գաղափարը, ապրումը ունի, քան դ-ն: Հիմա, եթէ կ'արտօնէք այս շեղումը օրէնքներէն ամբողջ գիծի վրայ հարցը պիտի ընդհանրացնէք, եւ բացարձակապէս իրաւունք պիտի չունենաք որեւէ հրահանգ տալու, որեւէ բան պահանջելու գրազէտէն:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Զարմանալիօրէն, Վահէն եզրակացութեան եկաւ, ահա կապ կը հաստատէ պատին երկու կողմերուն միջեւ: Տարօրինակ զուգադիպութեամբ մը ես գտնուած եմ այդ վիճակին մէջ. ինքը կ'ըսէ «կ'արտօնէ՞ք թակարդը». ես գործադրած եմ: Առէք վրէժ բառը, ըստ իս՝ ռ-ով պէտք է գրուի, գաղափարը անելի ուժգնութեամբ պիտի արտայայտէ: Կամ թիւրքը՝ թուրք: Քսան տարեկանիս՝ յօդուած մը գրած եմ, առաջարկելով որ գրենք «թո՛ւրք, վռէ՛ժ»....:

ՕՇԱԿԱՆ. - Ազատութեան հարց մը կայ, գրողին միակ պարտաւորութիւնը իր գործին հանդէպ է: Եթէ իր գործը կը պահանջէ փոխել՝ պիտի փոխէ. եթէ ինքն իր հետ անկեղծ է, անշուշտ: Գործէն կը դատենք մենք, թէ այդ մարդը վաւերական է, թէ ոչ: Գրական հոտառութիւն մը կայ որ

կը զգացնէ թէ եղածը բառախաղ է, կամ իրաւ բան մը: Յանուն ոչ մէկ սկզբունքի, ո՛չ հայ գրականութեան փառքին, ո՛չ անցեալի արժէքներուն՝ պէտք ունինք օրէնքներ, պարտադրանքներ դնելու բանաստեղծին վրայ: Պէտք է ազատ ձգէք զինք բոլորովին:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Յամաձայն եմ:

ՕՇԱԿԱՆ. - Ուրեմն, ունինք հետեւեալը: Մարդիկ կը գրեն ինչպէս որ կ'ուզեն, ուրիշներ կան որ կը գոհանան կամ ոչ. գոհանալու պարագային՝ գրողին գործը, գրողն ալ կարետր չէ, իրենց համար արժէք կը ստանայ: Իսկ եթէ չեն հասկնար, չեն սիրեր՝ հարցը կը փակուի ա՛յդ տեղը:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Ես ալ քեզի հարցում մը ունիմ. անկեղծ պատասխան մը լսել կ'ուզեմ քեզմէ եւ քու հետետրոյններէդ:

ՕՇԱԿԱՆ. - Ես հետետրոյ չունիմ:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Դժբախտաբար կ'ունենաս կոր: Ուրեմն, հարցը տանք: Ազատութեան կաշկանդում չկայ: Ամեն մարդ ուզածին պէս կը գրէ: Ահա 10-20 տարիէ ի վեր ազատ կերպով կը գրես: Այս հսկայական ճիգերը ո՛ր յանգեցան: Բնագղը չ'ը՛սեր քեզի որ ընթերցող հասարակութիւնը, պաշտօնապէս կրնաս արհամարհել, բայց անպաշտօն կերպով բոլորս ալ կ'ուզենք կարդացուիլ, ոչ գնահատուելու, այլ հասկցուելու համար: Նոյնիսկ քու սերունդի՞դ ընթերցողը կը փնտռէ տարբեր բան մը: Նորութեան բնական ձգտումը ունենալով հանդերձ՝ չի բաւարարուիր նորութեան այն ձեւովը, որ կը կարծէք դուք տալ, այսինքն ոճային կամ բառային այս մարզանքներով: Ասիկա մտածել պէտք չի՞ տայ որ «ժամբանիս թերեւս սխալ է»: Նոր ժամբուն հականիշը անպայման հինը չէ, տարբեր ժամբայ մըն է: Գրողը փնտռտուքի, որոնումի մէջ պէտք է ըլլայ: Եւ ձեր տեսակէտին ալ դրդիչն է ասիկա, մինչդեռ կը տեսնենք մոլեգնութիւն մը սխալին մէջ, կը ներէք՝ ի՛մ իմաստով, սխալի՛ն մէջ յամառելու: Վերջին հարցում մը. դուն համոզուա՞ծ ես որ ժամբադ ճիշդ է:

ՕՇԱԿԱՆ. - Ես կը կարծեմ, որ այս փնտռտուքի ժամբան զիս կը հանէ այն խառնափնթոր վիճակէն, ուր կը գտնուիմ իբրեւ մարդ, իբրեւ հայ, իբրեւ միտք: Իմ նպատակս ասկէ դուրս ելլել է. թէ շիտակ է կամ ոչ՝ այնքան շիտակ է, հաւանաբար, որքան ձերը: Յարաբերական բաներ են ասոնք: Բայց չեմ կրնար ըսել որ ժշմարտութեան ժամբան է: Ո՛վ կրնայ ըսել:

ԾԱՌՈՒԿԵԱՆ. - Լիովին գոհացած եմ, ուրեմն մենք վիճաբանութիւն չունինք եղեր...

ՊԸԼՏԵԱՆ. - Վերադառնալով հայ նոր գրողներու հարցին՝ հայաստանեան գրականութեան համար կրնամ ըսել որ Պարոյր Սեւակը 30 տարի ետ է Չարենցէն, որ մեզի շատ բան բերած էր: Գալով Սփիւռքին՝ ինծի խրախուսին քիչ մը ավելի կը խօսի քան Չահրատը: Ան ունի արուեստի, բանաստեղծութիւն ընելու գիծը: Անկէ անդին՝ Սփիւռքի մէջ

շատ բան չէ եղած, եւ մեր այս փնտռողները միայն կրնանք բացատրել այս իրողութեամբ: 40 տարիէ ի վեր սփիւռքահայ բանաստեղծութիւնը փորձ չըրաւ: Ջբաղեցաւ աղուոր զգացումներով, հայրենասիրութեամբ եւն. կարծես ուրիշ բան չկար: Մէկ մեծ գրող թերեւս տուած է Սփիւռքը, նազ նոր, ան ալ Սարաֆեանն է որ իսկապէս գրականութիւն կը բերէ Սփիւռքին: Ասկէ ետք եկածները կը կարդանք, կը հաւնինք, բայց ձեր ըսած մթնոլորտը չեն բերեր անոնք:

ԵԱՅԻՆԵԱՆ. - Հոս ալ կարծեմ կրնանք փակել այս գրույցը: Մէկ բան վստահ եղանք. որ նոյնիսկ եթէ պատ մը գոյութիւն ունի՝ պատին ծակերէն կարելի է հաղորդակցութիւն հաստատել եւ հաւանօրէն այս նորութիւնը որուն մասին կը խօսինք, ճիգ մըն է բան մը ընելու՝ յանձնաճակատ համար այն գրական հոսանքը, որ հինէն եկած է մեզի, որ այսօր կարծես դժբախտաբար դանդաղած է, եւ պէտք է նոր ձեւով մը ժամբայ ելլէ: Պետք է որ բան մը շարժի, այդ շարժումը ի՛նչ կ'ուզենք կոչենք, նոր, հինի մէջ յանձնաճակատն եւն.: Պէտք է որ բան մը շարժի, պէտք է որ այս ծանծաղուտէն սփիւռքահայ գրականութիւնը դուրս գայ վերջապէս: